Հայաստանի ՄՌ Ասոցիացիա

«Նոր Էջ»

կորպորատիվ սոցիալական պատասխանատվության
նախագծի տարեկան հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Նոր Էջ» նախագծի մասին 3
2023թ. իրականացված աշխատանքներ 5
Ֆինանսական հաշվետվություն 9
Ամփոփում 11

«Նոր Էջ» նախագծի մասին

«ՄՌ Ասոցիացիա» ՀԿ-ի հեղինակային «Նոր Էջ» նախագիծը մեկնարկել է 2020թ. մարտական գործողությունների ավարտից հետո՝ 2021թ. հունվարին:

Նախագծի **նպատակն** է պատերազմի մասնակիցներին և զինհաշմանդամներին սեփական կարողությունները զարգացնելու, հստակ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու հնարավորություն ընձեռել՝ այդպիսով նպաստելով լիարժեք աշխատանքային կյանք վերադառնալուն: Նախագծի մեկնարկից հետո առաջին երեք ամիսների ընթացքում իրականացվեց շահառուների և հետաքրքրված գործատուների կարիքների մանրամասն գնահատում: Արդյունքում, **հավաքվեց շահառուների վերաբերյալ խորքային բազա**, որը բացի ժողովրդագրական տվյալներից պարունակում է նաև տեղեկատվություն երիտասարդների կրթության, հետաքրքրությունների, կարիքների, ունակությունների և կարողությունների մասին:

Գործունեության ընթացքում ձեռք են բերվել **շուրջ 300** համագործակցություններ տարբեր կազմակերպությունների, անհատների, հիմնադրամների և ընկերությունների հետ, որոնցից **ակտիվորեն ներգրավվել են 144-ը:** Սույն տարվա ընթացքում հաստատել ենք նոր գործընկերային կապեր Star English Center (Ստեփանակերտ) անգլերենի ուսուցման կենտրոնի, A&WW վիրտուալ դպրոցի, «Զեյն Էլեկտրիկ» ՍՊԸ-ի, Umbatraining-ի, SSB Academy-ի, Սոցիալական ձեռներեցների դպրոցի, Gazzar Studio-ի և այլ ընկերությունների ու անհատների հետ: Ինչպես նաև շարունակել ենք արդեն առկա համագործակցությունները և դասընթացները:



Նկ. 1. Ակտիվ գործընկերների բաշխվածությունը

Ներկա պահին նախագծում գրանցված մասնակիցների թիվը 2000-ից ավել է, որից **1620-ն անցել են կարիքների գնահատում:**

Շահառուների **90%-ից ավելին կազմում են 2020թ. պատերազմի մասնակիցները**, սակայն փոքր խմբերով կան տարբեր մարտերի մասնակցած և զինվորական ծառայության ընթացքում վիրավորում ստացած և/կամ հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդներ, այդ թվում՝ 2016թ. ապրիլյան պատերազմ, 2022թ. սեպտեմբերի գործողություններ և այլն:



Նախագծի գործունեությունը ծավալվեց **ՀՀ ողջ տարածքում ու Արցախում**: Շահառուների մեծ մասը՝ 34%-ը, մայրաքաղաքից է: Հաջորդ տեղում Շիրակի և Կոտայքի մարզերն են՝ 11% և 10%: Մյուս մարզերից և Արցախից շահառուների թվաքանակը տատանվում էր 3-8%-ի միջակայքում:

Նկ. 2. Մասնակիցների բաշխվածությունն ըստ մարզերի

2023թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ, նախագծի մեկնարկից ի վեր, **1286 շահառու մասնակցել են** որևէ դասընթացի կամ ծրագրի: Ինչպես նաև, 60-ից ավել երիտասարդ ընդունվել է աշխատանքի: Այս ընթացքում կազմակերպվել և իրագործվել են 262 վճարվող և անվճար դասընթացներ և վեբինարներ:

2023թ. ընթացքում նախագծին միացել է ամսական միջինում 22 նոր շահառու, թեև նոր շահառուների ներգրավման ուղղությամբ որևէ նպատակային աշխատանք չի արվել. դիմել են նախագծի շահառուների ընկերները, բարեկամները և ծանոթները՝ հենց շահառուների խորհրդով և ուղղորդմամբ: Դա վկայում է ծրագրի արդյունավետության և կայուն հեղինակության մասին:

2023թ. իրականացված աշխատանքներ

Այս տարի աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- կազմակերպել ուսումնական և մասնագիտական կողմնորոշման ծրագրեր և մարդուն աշխատաշուկայում ավելի մրցունակ դարձնող փափուկ և կոշտ հմտությունների զարգացման դասընթացներ,
- օժանդակել շահառուներին լեզուների տիրապետման և վարորդական հմտությունների զարգացման գործընթացում, քանի որ դրանք ուղղակիորեն բարձրացնում են աշխատանքի տեղավորման հավանականությունը,
- շահառուների առավել մոտիվացված մասին տալ կոնկրետ մասնագիտական զարգացում և/կամ մասնագիտացում իրենց գործունեության կամ երազանքի ոլորտում,
- ձեռներեցության փորձեր անող շահառուներին տրամադրել բիզնեսի վարման տարբեր գիտելիքներ՝ դյուրացնելով այդ գործընթացը,
- շարունակաբար համագործակցել ոլորտում գործունեություն ծավալող կառույցների հետ,
- պատերազմի մասնակիցներին ուղղված ծրագրերի մասին տեղեկատվություն տրամադրել շահառուներին:

Նախագծի շրջանակներում շահառուների համար կազմակերպվել են տարբեր ոլորտների դասընթացներ, քանի որ շահառուների պահանջները բավական բազմազան են: **2023թ. կազմակերպվել և իրականացվել է 102 դասընթաց/ծրագիր/վեբինար, որոնց մասնակցել է 443 շահառու** (մեկ շահառու շարունակել է նախորդ տարի սկսված դասընթացը, այստեղ հաշվված չէ):



Նկ. 3. Մասնակիցների թվաքանակի բաշխվածությունն ըստ դասընթացների ոլորտների, 2023թ.

Հաջորդիվ առավել մանրամասն ներկայացված են մի քանի դասընթացներ, որոնք մասնակցելիության առավել բարձր ցուցանիշ են ունեցել և իրականացվել են Հայաստանի տարբեր քաղաքներում:

1. **Վարորդական իրավունքի տեսական ու գործնական դասընթացներ**

Վարորդական իրավունքի դասընթացներ են իրականացվել Երևան, Աբովյան, Արմավիր, Արտաշատ, Իջևան, Հրազդան, Վանաձոր, Աշտարակ, Գյումրի և Կապան քաղաքներում: Շահառուներին հնարավորություն է տրվել, ըստ իրենց ցանկության, մասնակցել տեսական և/կամ գործնական դասերի: Կարևոր է այն հանգամանքը, որ այս դասընթացին մասնակցությունը ենթադրում է շահառուի կողմից վարձավճարի մի մասի վճարում: Մեր գործունեության ընթացքում պարզ դարձավ, որ սա ևս գործող մոդել է, որը նպաստում է շահառուների պատասխանատվության զգացման մեծացմանը, և իհարկե մասամբ թեթևացնում է նախագծի ֆինանսական բեռը: Վարորդական իրավունքի գործնական և տեսական դասընթացներն ավարտել է 189 շահառու 2023թ. ընթացքում:

Այս դասընթացների պահանջարկը բավականին մեծ է շահառուների շրջանում, ինչն ունի մի շարք պատճառներ, մասնավորապես՝ մի շարք աշխատանքներ պահանջում են վարորդական վկայականի առկայություն: Այն փաստը, որ ավտոդպրոցներն ունեն մասնաճյուղեր գրեթե բոլոր մարզերում, հնարավորություն է տալիս մեծ թվով շահառուների ընդգրկել: Նման հնարավորությունը բացակայում է բազմաթիվ այլ ոլորտների պարագայում:

2. **Բանակցություններ, հաղորդակցում, առաջնորդություն («Մեր սերունդը» ծրագիր)**

«Բանակցություններ, հաղորդակցում, առաջնորդություն» դասընթացն իրականացվել է Երևանում, մասնակցել է 9 շահառու: Դասընթացի շնորհիվ մասնակիցներն ստացել են գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ինչպես մասնագիտական գործունեության մեջ, այնպես էլ առօրյա կյանքում: Հարկ է նշել, որ բացի բուն գիտելիքներից դասընթացը նպաստել է շահառուների միջև փոխհարաբերությունների ձևավորմանը և զարգացմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը և ընկերական հարաբերությունների ձևավորմանը:

3. **Օտար լեզուների դասընթացներ**

Հաշվի առնելով շահառուների հետաքրքրվածությունը և լեզուների իմացության դերը աշխատանքային գործունեության և մասնագիտական առաջխաղացման մեջ՝ կազմակերպվել և իրականացվել են անգլերենի, ռուսերենի, իսպաներենի և գերմաներենի դասընթացներ:

Երևանում անգլերենի ուսուցումը իրականացրել է Specialized English School անգլերենի ուսուցման կենտրոնը, նաև համագործակցել ենք ICLT լեզուների ուսուցման կենտրոնի հետ, ինչի շնորհիվ այս տարի ևս դասընթացներն իրականացվել են մի քանի խմբերով՝ լեզվի իմացության տարբեր մակարդակներ ունեցող երիտասարդներին ներգրավելու հնարավորություն տալով: Իսկ Star English center-ի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է անգլերենի դասընթաց Ստեփանակերտում:

A&WW վիրտուալ դպրոցի հետ համագործակցությամբ կազմակերպվել և իրականացվել է գերմաներենի և իսպաներենի մեկական դասընթաց, նաև ռուսերենի դասընթաց 3 խմբերի

համար: Դասընթացներն իրականացվել են առցանց, ինչը թույլ է տվել ապահովել նաև մարզերի և արցախցի շահառուների, ինչպես նաև առողջական խնդիրներ ունեցող երիտասարդների մասնակցությունը:

4. Ծրագրավորում

33 շահառու մասնակցել է SS ոլորտի տարբեր դասընթացների, որոնցից 26-ը ուղղորդվել են այլ ընկերություններ և դասընթացներին մասնակցել անվճար հիմունքներով: Ընդհանուր առմամբ շահառուները մասնակցել են ծրագրավորման հետևյալ ուղղությունների դասընթացների.

- Կիբերանվտանգություն
- Data Analysis
- QA Automation
- Software Engineering in Web
- Solid Works

5. Սոցիալական ձեռներեցություն

Ձեռներեցության վերաբերյալ դասընթացները շահառուների կողմից ամենապահանջված դասընթացներից ցանկում են: Սոցիալական ձեռներեցների դպրոցի կողմից իրականացվել է Սոցիալական ձեռներեցության դասընթաց, որի ժամանակ շահառուները ծանոթացել են սոցիալական ձեռներեցության առանձնահատկություններին, սովորել են կազմել գրավոր բիզնես մոդել և հակիրճ սահիկաշար (pitch deck), ինչպես նաև հանդիպումներ են ունեցել տարբեր գործարարների հետ և ծանոթացել նրանց փորձին: Շահառուների ներկայացրած բիզնես ծրագրերից ամենահաջողվածն ստացել է փոքր նվիրատվություն դպրոցի կողմից:

6. DJ դասընթաց

Շահառուները մեծ հետաքրքրությամբ և մոտիվացիայով են մասնակցել DJ դասընթացին: Նշենք նաև, որ շահառուներից մեկը դեռևս դասընթացի ընթացքում ընդունվել է աշխատանքի:

7. SMM դասընթաց

SMM-ը ներկայումս հայաստանյան աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտացումներից է: Դասընթացն իրականացվել է SSB Academy-ի կողմից, այն ենթադրում է նաև մշտապես հասանելի վիդեոդասերի տրամադրում և դասընթացից հետո մասնագիտական խորհրդատվություն ստանալու հնարավորություն:

8. Wildberries manager դասընթաց

Վերջին շրջանում ՀՀ-ում լայն տարածում է ստացել Wildberries հարթակը: Այս դասընթացը հնարավորություն է տվել սովորելու այդ հարթակում ներկրման և արտահանման ողջ գործընթացի գրագետ կազմակերպումը, ինչը սեփական բիզնես ստեղծելու լրացուցիչ հնարավորություն է ստեղծում:

9. Էլեկտրամոնտաժի դասընթաց

Էլեկտրամոնտաժի դասընթացն իրականացվել է «Զեյն Էլեկտրիկ» ՍՊԸ-ի կողմից: Դասընթացը հնարավորություն է տվել զրոյական մակարդակից սովորել էլեկտրամատակարարման հիմունքները, մոնտաժել և տեղադրել հաստատուն, փոփոխական և եռաֆազ հոսանքի շղթաներ, տրանսֆորմատորներ, էլեկտրաէներգետիկական համակարգեր: Դասընթացի շրջանակներում շահառուները սովորել են նաև աշխատել արևային համակարգերի (ֆոտովոլտային) հետ: Հարկ է նշել, որ սա ներկայիս աշխատաշուկայում պահանջված մասնագիտություն է: Դասավանդողը պահում է կապը շահառուների հետ և հնարավորության դեպքում նրանց կանչում է պրակտիկաների:

10. Մարքեթինգի և վաճառքի հիմունքներ

Իրականացվել է մարքեթինգի և վաճառքի հիմունքների երկու դասընթաց, որոնցից մեկը Երևանում, մյուսն՝ առցանց: Դա հնարավորություն է տվել մասնակցել նաև մարզերում բնակվող և Երևան գալու դժվարություն ունեցող շահառուներին:

Նշված դասընթացներից բացի իրականացվել են դասընթացներ գյուղատնտեսության, ֆիզիոթերապիայի, գրաֆիկ դիզայնի, ֆինանսների և այլ ոլորտներից: Դասընթացներն իրականացվել են տարբեր քաղաքներում, ինչպես լսարանային, այնպես էլ առցանց ձևաչափերով:

Դասընթացներին զուգահեռ տարվել են հետևյալ մշտական աշխատանքները.

- ✓ նոր շահառուների կարիքների գնահատումը,
- ✓ փաստաթղթային և այլ հարցերում խորհրդատվությունը,
- ✓ շահառուների և գործընկերների հետ մշտական կապ պահելը,
- ✓ պատերազմին մասնակցած անձանց վերաբերող նորություններին հետևելը և շահառուներին իրազեկելը,
- ✓ պարբերական գնահատումները և մշտադիտարկումը:

Ֆինանսական հաշվետվություն

Ստորև ներկայացված է 01.01.2023թ. – 31.10.2023թ. ֆինանսական կատարողականը:

Նվիրատվություն	Փաստացի մուտք (ՀՀԴ)
Երևան իմ սեր հիմնադրամ (ներառյալ 2022թ. մնացորդը)	16,954,142
Friends of the Armenian Soldier and Family Foundation	9,807,315
Ընդամենը	**26,761,457**

Վարչական ծախսեր	Փաստացի ծախս (ՀՀԴ)
Նախագծի համակարգման ադմինիստրատիվ ծախսեր	2,537,156
Վճարված հարկեր	1,526,552
Այլ ծախսեր	1,304,411
Ընդամենը	**5,368,119**

Հաղորդակցում և իրազեկում	Փաստացի ծախս (ՀՀԴ)
Հաղորդակցում, տեսանելիության բարձրացում և իրազեկում	1,885,840
Ընդամենը	**1,885,840**

Դասընթացներ և կրթական ծրագրեր	Դասընթացների քանակ	Մատակարարների քանակ	Անվճար մասնակիցների քանակ	Վճարովի մասնակիցների քանակ	Փաստացի ծախս (ՀՀԴ)
Ադմինիստրատիվ օգնություն և մասնագիտական կողմնորոշում				238	2,850,000
Արհեստ և արվեստ	7	5		22	1,613,500
Գյուղատնտեսություն	2	1	2		0
Դիզայն և ճարտարապետություն	4	2	6	2	189,000
Մարքեթինգ, սպասարկում, վաճառք	4	3	1	29	1,398,000
ՄՌ և կառավարում, ձեռներեցություն	7	5	41	15	1,222,400
Վարորդական իրավունքի տեսություն և պրակտիկա	43	2		189	6,893,000
SS ոլորտ	10	6	26	7	561,500
Փափուկ հմտություններ	6	6	11	30	2,057,900
Օտար լեզուներ	17	4		58	2,678,625
Ֆինանսներ	2	2	2	2	70,000
Ֆիզիոթերապիա և սպորտ (2022թ. շարունակություն)	1	1		1	50,000
Ընդամենը	**102**	**36**	**89**	**354**	**19,583,925**
Ընդամենը ծախս				**26,837,884**	
Մնացորդ				**-76,427**	

Նվիրատուների կողմից տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործվել են երեք հոդվածով.

1. դասընթացների և կրթական ծրագրերի կազմակերպում, որը կազմում է ընդհանուր ծախսի 73%-ը,
2. նախագծի տեսանելիության և իրազեկվածության բարձրացում, որը կազմում է ընդհանուր ծախսի 7%-ը, (նախագծի գործունեության թափանցիկության ապահովումը, տեսանելիությունը և հաշվետվողականությունը),
3. վարչական ծախսեր, որոնք կազմում են ընդհանուր ծախսի 20%-ը (ներառում է նախագծի գործառնական վարումը, անհրաժեշտ պարագաների գնումը, շահառուների հետ անհատական աշխատանքը և հաղորդակցումը, գործընկերների հետ շարունակական համագործակցությունը, պարբերական գնահատումներն ու մշտադիտարկումը և պետական հարկերը):

   Առաջացած տարբերությունը վճարվել է մեր միջոցներից:

Ամփոփում

Ամփոփելով 2023թ. գործունեության ընթացքում իրականացված աշխատանքները՝ կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները.

- ✓ կազմակերպված և իրականացված մասնագիտական, փափուկ և կոշտ հմտությունների զարգացման, մասնագիտական կողմնորոշման դասընթացներ և ծրագրեր,
- ✓ համագործակցություն տարբեր հասարակական կազմակերպությունների, ընկերությունների, պետական կառույցների և անհատների հետ,
- ✓ նոր շահառուների չընդհատվող հոսք,
- ✓ շահառուների գոհունակության և վստահության բարձր ցուցանիշ:

Նախագիծը հաջողությամբ գործեց ևս մեկ տարի՝ բարձր պահելով մինչ այդ հաստատված նշաձողը և արդարացնելով շահառուների սպասելիքները:

Այս տարի ևս արձագանքների վերլուծությունը փաստում է, որ նախագիծը դրականորեն է ազդում մասնակիցների մեծ մասի ընդհանուր մտածողության վրա:

Նախագծի հաջողության մասին են վկայում քանակական արդյունքները, շահառուներից ամեն օր ստացվող արձագանքները և նոր դիմորդների չընդհատվող հոսքը գործունեության ողջ ընթացքում: Կարող ենք պնդել, որ «Նոր Էջ»-ը, որպես կրթական նախագիծ, ձեռք է բերել ճանաչում և շահառուների վստահությունը: